## ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԽՍՀՄ–Ի ՓԼՈՒԶՈՒՄԸ, «ԹՈՒՐՔ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ» ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՐՑԸ (1990–95–ԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ)

Խորհրդային Միության փլուզումը, անկախ պետությունների ձևավորումը, նախկին հանրապետություններում ազգային գաղափարախոսության և ազգային շարժումների վերելքը արմատապես փոխեցին տարածքում ուժերի տեղաբաշխումը: Ստեղծված իրավիճակում ԽՍՀՄ–ին սերտ հարևանությամբ գտնվող Թուրքիան չէր կարող չվերանայել իր արտաքին քաղաքականությունը, չարձագանքել, մասնավորապես, թուրքալեզու հանրապետություններում արթնացող ազգայնական գաղափարներին և չփորձել օգտագործելով էթնիկական, լեզվական և կրոնական ընդհանրությունը՝ լցնել ստեղծված քաղաքական վակուումը: Այս մթնոլորտում քաղաքական խաղաթղթերի կապուկից նորից դուրս է հանվել Թուրքիայում երբեք չսպառված այսպես կոչված «թուրքական միասնության» գաղափարը, որը վերջերս, 90–ականներից սկսած, առավել ակտիվ քննարկման առարկա է դարձել թուրքական զանգվածային լրատվության միջոցներում, գիտական և հասարակական քաղաքական ժողովներում[1]:

Ստորև կանդրադառնանք մի քանի ուշագրավ հոդվածների, որոնք լույս են տեսել «Turkistanin sesi» և «Yeni Forum» գիտաքաղաքական պարբերականների էջերում 1990–1995թթ.: «Turkistanin sesi» ամսագրում «Dis turkeri» — «Արտաքին թուրքեր» խորագրի տակ «Ataturk ve butun turkluk» — «Աթաթուրքը և թուրք հանրությունը» վերնագրված դոկտոր Մերթին Քարաօրսի հոդվածը նվիրված է Թուրքական Հանրապետության հիմնադրի՝ Աթաթուրքի

հայացքների վերլուծությանը «թուրքական միասնության» վերաբերյալ[2]:

Դոկտոր Քարաօրսը հիշեցնում է, որ թուրքական հանրապետության ստեղծման 10-ամյա հոբելյանի տոնակատարության ժամանակ արտասանած իր ճառում Աթաթուրքն ասել է. «Ամեն մի ազգ անպայմանորեն իր ազգային իդեալներն է ունենում: Այդ իդեալները չպետք է բացահայտվեն պետության կողմից: Մտովին պահպանելով այդ իդեալները, հետևելով նրանց մենք մեր վարվելաձևով և քաղաքական քայլերով պետք է մոտեցնենք նրանց իրականացումը»: Աթաթուրքի նշած իդեալները, գրում է Քարաօրսը, վերաբերում են «Butun Turkluk», այսինքն «թուրքական միասնության» գաղափարին: Այն ժամանակ դրա մասին խոսելն անգամ անհնարին էր, շարունակում է հեղինակը, սակայն Աթաթուրքը ընդգծում էր նաև իրավիճակների փոփոխականությունը: «Այսօր,— ասում էր նա,— Սովետական Ռուսաստանը մեր բարեկամն է, մեր դաշնակիցը: Մենք կարիք ունենք այդ բարեկամության: Սակայն ոչ ոք չգիտե, թե վաղն ինչ կլինի: Գուցե նա փլուզվի Օսմանյան կայսրության պես: Եվ այն ժողովուրդները, որոնց այսօր նա պինդ պահում է իր ձեռքում, վաղը կարող են դուրս փախչել այդ ճանկերից: Աշխարհը նոր տեսք կստանա: Թուրքիան պետք է իմանա իր անելիքը այդ պահին և պատրաստ լինի իր ձեռքի տակ առնել իր արյունակից թուրք եղբայրներին: Պատրաստ լինելը չի նշանակում լռել և սպասել, անհրաժեշտ է պատրաստվել: Իսկ պատրաստվելը նշանակում է սկզբից հոգևոր կամուրջները պահել եղբայր ժողովուրդների միջև... Այդպիսի կամուրջներ են լեզուն, հավատը, պատմությունը: Ստեղծելով այսօր նոր Թուրքիան, մենք դրանով իսկ դնում ենք ապագայի Մեծ Թուրքիայի հիմքը»,— ավարտում է Քեմալ Աթաթուրքը: Հատկանշական է, որ խոսելով փաստորեն Թուրան պետության ստեղծման մասին, Թուրքական Հանրապետության հիմնադիրը խուսափում է այն անվանել հենց այդպես, այլ զգուշորեն օգտագործում է Մեծ Թուրքիա անվանումը: Այսպիսով, միանգամայն պարզ է, որ չնայած բազմաթիվ քաղաքական հայտարարությունների, Թուրքիան երբեք չի հրաժարվել պանթուրքիզմի նպատակներից:

Կարծես շարունակելով նախկին հոդվածագրի մտքերը, մի այլ հեղինակ՝ Զիյաէթթին Քաբաքուրբանը, նույն ամսագրի հաջորդ համարում անդրադառնում է Թուրքիայի կոնկրետ անելիք-

ներին ազգային իղձերը իրականացնելու համար»: «Թուրքական մամուլը և արտաքին թուրքերի պրոբլեմը» իր հոդվածում նա գրում է, որ երկար տարիներ շարունակ, վախենալով մեղադրվել պանթուրքիզմի մեջ, Թուրքիան ակտիվորեն չի զբաղվել արտաքին թուրքերի խնդրով: Այսօր, նշում է նա, անհրաժեշտություն է դարձել ստեղծել պետական մակարդակով Արտաքին թուրքերով զբաղվող մի մարմին և նաև նույն նպատակին ծառայող հատուկ լրատվական կենտրոն[4]: Պետք է նշել, որ արտաքին թուրքերի պրոբլեմը սոսկ մամուլում արծարծվող թեմա չէ: Այն բերում է կոնկրետ և պրակտիկ քայլերի և իշխող կուսակցությունը հատուկ կետ է ընդունել այդ հարցի վերաբերյալ: 1994 թվականից սկսած (Կազան) Թուրքիայի աջակցությամբ անցկացվում են թուրքալեզու ժողովուրդների համահավաքներ: Առաջին համահավաքում որոշում կայացվեց լատիներեն այբուբենին անցնելու, դպրոցներում և բուհերում թուրքերենի իմացությունը զարգացնելու մասին[5]: 1995թ. փետրվար ամսին Անկարայում տեղի ունեցած Թուրքիայի, Ադրբեջանի, Միջին Ասիական հանրապետությունների ղեկավարների հանդիպման ժամանակ փաստաթղթեր ստորագրվեցին քաղաքական, տնտեսական և մշակութային համագործակցության վերաբերյալ, ինչպես նաև որոշվեց ստեղծել այսպես կոչված համաթուրքական գիտական և մշակութային Ակադեմիա: Սուլեյման Դեմիրելի Աշխաբադ կատարած այցը նույնպես մի որոշակի քայլ էր այդ ուղղությամբ:

90–ականների թուրք մամուլի էջերում նաև ակտիվորեն քննարկվում էր այսպես կոչված «Թուրք — իսլամ — սենտեզի» դոկտրինան: «Յենի ֆորում» ամսագրի էջերում տեղ գտած «Ուշադրություն դեպի թուրքական աշխարհը» վերնագրված ծավալուն հոդվածում վերլուծվում են այն լծակները, որոնք Թուրքիան կարող է օգտագործել ներթափանցելու համար անկախացած թուրքալեզու հանրապետությունները, մասնավորապես այն հարցը, թե ինչպիսին կարող է լինել կրոնի դերը այդ պրոցեսում[6]: «Թուրքիայի ամենամեծ պրոբլեմներից մեկն այն է,— գրում է հոդվածագիրը,— որ իր արտաքին քաղաքականության մեջ նա երկարատև միայնության մեջ է եղել: Մենք չենք պատկանում ոչ արաբական աշխարհին, ոչ Եվրոպային (այսինքն Լատինական), ոչ Սլավոնական, ոչ էլ Անգլո–Սակսոնյան աշխարհին: Լինելով մուսուլման, մենք չենք կարող վստահել քրիստոնյաներին, լինելով

աշխարհիկ պետություն, դուրս ենք մնում նաև իսլամական աշխարհից: Մեր միակ հույսը՝ մեր թուրքալեզու եղբայրներն են»,— եզրակացնում է հոդվածագիրը[7]: «Թուրքական միասնության» գաղափարի քննարկմանը ներգրավվում են նաև արտասահմանյան գիտնականները: Մասնավորապես, հայտնի արևելագետ Բերնարդ Լյուիսն իր «Ինչ արեց Սադդամը» հոդվածում գրում է, որ օրինաչափ է այսօր հին պանթուրքագիտական–պանթուրանական գաղափարների վերածնունդը Թուրքիայում: Թուրքիան իր ապագա քաղաքականությունը պետք է փնտրի ավելի շատ Արևելքում, քան Արևմուտքում, նշում է նա: Միասնական և Մեծ Թուրան պետության ստեղծումը նա համարում է քաղաքական պատրանք, քանի որ, այնուամենայնիվ, ամեն մի պետություն ունի արդեն իր առնածնահատուկ դիրքը, քաղաքական շահերը և սեփական պատմությունը, անցել է իր սեփական պատմական ուղին: Նա չի բացառում, սակայն, համաթուրքական դաշինքի ստեղծումը, դիտելով այն որպես ժամանակավոր և ամորֆ: Պանթուրքիզմը, ինչպես և պանարաբիզմը, նշում է նա, դատապարտված են մահվան[8]:

«Յենի ֆորում»–ի էջերում զետեղված «Աղրբեջանի ապագան», «Ուշադրություն Մոսկվա–Թեհրան համագործակցությանը» և «Փոխվում են արդյոք մեր հայացքները պատմության վերաբերյալ» իր հոդվածաշարում հեղինակը՝ պրոֆեսոր Ահմեդ Յալչինը, նույնպես անդրադառնում է «թուրքական միասնության» գաղափարին[9]: Թուրքիայի ապագան Արևելքում է, պնդում է նա: Պետք է կարողանալ հեռանալ Արևմուտքից, որին Թուրքիան ձգտել է, որը սակայն անհրաժեշտ է միայն պրագմատիկ տեսակետից: Չխզելով կապերը Արևմուտքի հետ, մենք պետք է մտածենք մեր ազգային իդեալի մասին, գործնական քայլեր ձեռնարկենք այն իրականացնելու համար: Այս երկարատև ճանապարհին մենք ունենք ավանդական հակառակորդներ: Ռուսաստանը, որը բռնելով ազգային զարգացման ուղին, զարգացնելով տնտեսություն, շատ արագ կարող է դառնալ բավականին հզոր պետություն: Նա պետք է փորձի ետ բերել կորցրած քաղաքական և տնտեսական դիրքերը նաև թուրքալեզու հանրապետություններում: Եվ տրամաբանորեն կսկսվի ավանդական ռուս–թուրքական հակադիմակայումը: Մենք այժմ պետք է մտածենք, թե ովքեր են մեր դաշնակիցներն ու հակառակորդները: Այդ պատճառով առա-

վել կարևոր է մեզ համար Ադրբեջանը: Այն Թուրքիային Միջին Ասիայի, Կովկասի և Կասպից ծովի շրջակայքի հետ կապող միակ և ամենաօգտակար ու վստահելի կամուրջն է, գրում է հեղինակը: Յալչինը համաձայնվում է Ադրբեջանի նախագահ Ալիևի՝ Թուրքիա 1995–ին կատարած այցի ժամանակ արտահայտած այն մտքի հետ, որ Ադրբեջանը Թուրքիայի համար պետություն–բնական է, իսկ Արցախը միջնաբերդ այդ ճանապարհին: Եվ որ ներկայումս հայկական հարցը (այսինքն Արցախը) միայն Ադրբեջանի խնդիրը չէ: Դա նաև Թուրքիայի ապագայի հարցն է:

Նեո–թուրանիզմի մեկ այլ կոնցեպցիա ներկայացված է ադրբեջանցի Նեսիբ Նեսիբզադեի «Ադրբեջանի առաքելությունը Նոր Թուրանի ստեղծման տեսանկյունից»[10]: Իր ծրագրի ներածության մեջ նա արձանագրում է, որ անկախացումը թուրքալեզու հանրապետություններին դարձրեց միջազգային հանրության լիիրավ անդամ: Մեկ այլ փաստ, որը արձանագրում է Նեսիբզադեն, դա, իբր, աշխարհում բարձրացող հակաթուրքական թշնամանքն է: Ուրեմն, հեղինակի կարծիքով, թուրքալեզու հանրապետությունների և Թուրքիայի առաջնահերթ խնդիրն է՝ միավորել ուժերը և ջանքերը՝ դիմակայելու համար «քրիստոնեական աշխարհի թշնամանքին»: Անդրադառնալով պանթուրքիզմի պատմությանը, նա նշում է, որ ներկայումս էլ Թուրան ստեղծվելիք միասնության աշխարհագրական սահմանները նույնն են, ինչ որ Իսմայիլ բեյ Գասպարալու արտահայտած կարգախոսին համապատասխան՝ «Միասնություն լեզվում, գաղափարներում և գործելակերպում» («Dilde, Fikirde, Iste Birlik»): Նա ափսոսում է, որ 70–ամյա խորհրդային շրջանում շատ բան արվեց, մոռացության հանձնելու իրենց թուրքական ծագումը, բայց հիմա «բոլոր թուրքերը» հնարավորություն ունեն միանալու և միասնական դաշինք ստեղծելու: Նեսիբզադեն նման դաշինքի ստեղծումը վտանգավոր չի համարում, այլ դիտում է որպես դրական երևույթ, համեմատելով այն եվրոպական համագործակցության, կամ Արաբական երկրների միասնության հետ: Համաձայն Նեսիբզադեի, Նոր Թուրանում ամենակարևոր դիրքը պատկանում է Ադրբեջանին՝ քանի որ այն գտնվում է «Թուրանի սրտում»: Հետևաբար, Ադրբեջանին սպառնացող վտանգը դա վտանգ է ապագա Թուրան պետության համար: Ուստի, եզրակացնում է նա, պետք է կանխել Արցախի

անջատումը Ադրբեջանից և խանգարել Հայաստանի ուժեղացմանը տարածաշրջանում:

Նեո–թուրանիզմի լույսի ներքո Արցախի հարցը, որը, ըստ էության, արցախահայության ազգային–ազատագրական պայքարն է ինքնորոշման համար իր իսկ սեփական հողում, ստանում է շատ կարևոր միջազգային բնույթ:

Այն է՝

1. Թուրքիան դիտում է Ադրբեջանը որպես երկիր–կամուրջ՝ տարածելու իր ազդեցությունը դեպի Արևելք, դեպի թուրքալեզու հանրապետություններ:
2. Թուրքական ազդեցության անընդմեջ տարածման ճանապարհին Արցախը (և Հայաստանը) հանդիսանում է մի միջնաբերդ, որը «խանգարում է» այդ նպատակն իրագործելուն:
3. Արևմուտքը, որը հետաքրքրված է այսպես կոչված «թուրքական մոդելի» տարածմանը այս ռեգիոնում, չի ցանկանա, այնուամենայնիվ, Թուրքիայի քաղաքական (և ոչ միայն տնտեսական, մշակութային և այլն) ազդեցության ուժեղացումը:
4. Ռուսաստանը չի ցանկանա կորցնել իր ազդեցության ոլորտի մեջ գտնվող հանրապետությունները և Թուրքիայի հզորացումը[11]:

Ուրեմն տեսնում ենք, որ Արցախի հարցը պետք է դիտել ոչ թե լոկ որպես մի լոկալ բնույթի կոնֆլիկտ (Հայաստան–Ադրբեջան), այլ՝ մի խնդիր, որի արդարացի լուծումից կախված է տարածքաշրջանում ուժերի տեղաբաշխումը և ռեգիոնի կայունությունը:

Ամփոփելով վերը շարադրածը, կարելի է տեսնել, որ այսպես կոչված «թուրքական միասնության» գաղափարը ոչ այլ ինչ է, քան պանթուրքիզմը նոր դիմակավորումով, որն աննախադեպ աշխուժությամբ (որերոդ անգամ) տարածում է ստանում Թուրքիայում: Իսկ երբ՝ գաղափարներով համակվում են մարդկային զանգվածները, նրանք կարող են դառնալ գործելակերպ և նորից կանգնում է մեր ազգի պետականության գոյատևման խնդիրը:

Ահա այսպիսին է գաղափարական այն խճանկարը, որը ներկայումս կա Թուրքիայում, և որում առկա է նաև նեո–թուրանիզմի գաղափարը, իսկ ինչպես՞ մենք կկարողանանք պահպանել հաշվեկշիռը տարածաշրջանում, դա մեր քաղաքագետների և մեր ժողովրդի խոհեմության խնդիրն է:

ANUSH HOVHANNISYAN

# THE DISSOLUTION OF THE SOVIET UNION. THE IDEA OF "TURKISH UNITY" AND THE QUESTION OF NAGORNO–KARABAGH.

(According to the Turkish publications of 1990–95's)

The collapse of Soviet Empire, metamorphosed into a messy and often tragically bloody disorder with a number of ethnic conflicts, the rise of ethnonationalism in the ex–Soviet successor states have radically changed the power balance in the huge region. It is natural, that neighbouring countrics, especially Turkey, had to reconsider its foreign policy, trying to use the phenomenon of mass political disintegration that occurred in the former USSR, to respond to the nationalistic movements in the Turkish–speaking republics of ex–USSR, and using ethnic, linguistic or religion identities, tried to fill in political vacuum. In such an atmosphere the idea of so called "Turkish Unity" is again pulled out from the pack Turkish policy and became the subject of animated discussion in Turkish media's, on the pages of academic magazines and on political and public forums.

In this article we try to analyse some of the conceptual articles on the problcm of Turkish Unity, emphasising especially the place and the role of Nagomo–Karabagh in this conceptual framework. The main sources for this article were the series of articles in the Turkish political magazines "Yeni Forum", "Dogu Turkistan sesi" and "Turkish Review" (1990–95). Coming to some conclusions, we can state that neo–Turanism idea, or the idea of Turkish unity today is not a complete political doctrine. It is very amorphous, it has not a concrete and real political programme. Of course both in Turkey and Turkish speaking republics there are political parties and forccs, that use neo–Turanist slogans for reaching their concrete tasks. For Turkey it is a means to penetrate to a new economic and political market, to increase its role and influence in a large region, for Turkish–speaking republics it is a means to solve their economic problems, receiving support from Turkey in the fields of culture, economics and so on. For Azerbaidjan it is first of all the warrant in its struggle against national–liberation movement of Nagorno–Karabagh. But, nevertheless, we should scriously take in account the reality of such conceptions. Because if there is an idea, once it may become a real political program for real political movement and action.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Neue Orientierungen in der Turkischen Aussenpolitik, "Turkei ınformation", N 46, 1992; Tansu Çiller, Turkey's Commitment to Globalization, "Turkish Review", N 33, 1993, pp. 5–7; Meltem Müftüler, Turkey and the Europeen Community: an uneasy relationship, "Turkish Review", N 33, 1993, pp. 31–41; Aydın Yalçın, Yeni Bir Düzen Yaratma Soruları, "Yeni Forum", N 272, 1992, ss. 40–42; Altemur Kılıç, Kafkasya'da ve Orta Asya'da umutlar, tehlikeler, "Yeni

Forum", N 275, 1992, ss. 34–36; Aydm Yalçın, Çıkar Yol Milli Koalisyondur, "Yeni Forum", N 275, 1992, ss. 39–40; Haci Haciyev, Kurtuluş Yolu — Turan Birliği, "Yeni Forum", N 281, 1992, s. 50; Ismet Giritli, Orta Doğu, Batı Kamuoyu ve Türkiye modeli, "Yeni Forum", N 276, 1992, ss. 27–30; Olcas Süleymanoğlu, Türk Dünyası Federasyonu kurulmalıdır, "Doğu Türkistan'ın Sesi", N 30, 1991, ss. 22–23; Abdulhamit Avşar, Türk Dünyaindaki Gelişmeler ve Doğu Türkistan, "Doğu Türkistan'ın Sesi", N 30, 1991, s. 24.

2. Metin Karaörs, Atatürk ve Bütün Türklük, "Dogu Türkistan'ın Sesi", N 29, 1991, ss. 13–15.
3. Ziyaettin Babakurban, Türk basını ve Dış Türkler Meselesi, "Doğu Türkistan'ın Sesi", N 29, 1991, ss. 16–17.
4. Այդպիսի կենտրոն ստեղծվել է Գերմանիայում և 1991թ.-ին արդեն լույս է տեսել «Բոլոր թուրքալեզու երկրներից լուրեր» պարբերականի առաջին համարը, տես՝ "Doğu Türkistan'ın Sesi", N 29, 1991, s. 33:
5. Լեզվական ընդհանրության կարևորությունը «թուրք միասնության» ստեղծման համար ընդգծել է միշտ Աթաթուրքը, տես՝ Salim Cohce, Mustafa Kemal Atatürk'ün Milliyçetilik Anlayışı, "Yeni Forum", N 289, 1993, ss. 48–53.
6. Türk Dünyasına ilgi, "Yeni Forum", N 265, 1991, ss. 11–12.
7. Նույն տեղում:
8. Bernard Lewis, Saddam'm yaptığı, "Yeni Forum", N 268, 1991, ss. 47–48.
9. Aydın Yalçın, Azerbaycan'ın geleceği, "Yeni Forum", N 275, 1992, ss. 37–38; Aydın Yalcın, Tarih hakkında bakışlarımız değiştiriyor mu?, "Yeni Forum", N290, 1994, ss. 11–15; Moskova — Tehran işbirliğine Dikkat, "Yeni Forum", N265, 1991, s. 15.
10. Nesip Nesipzade, Yeni Turanın kurulması bakımından Azerbaycan'ın Misyonu, "Yeni Forum", N 280, 1992, ss. 62–64.
11. Coşkun Knrca, Ermenistan Karşısında Gaflete son!, "Yeni Forum", N 275, 1992, ss. 48–50; Tunçay Özgünen, Azerbaycan uzerine Düşünceler, "Yeni Forum", N276, 1992, ss. 50–51.